



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՏՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



## ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՏԱՐՈՒԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԻՒՆ՝ ՅԱՆՁԱՍՈՒԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՆ ՈՒ ՊԱՏՐԱՏԱԿԱՄՈՒԹԵԱՆ

Արեւմտեան թեմի Ազգային Առաջնորդարանը, Երեքշաբթի, 3 Նոյեմբերի Երեկոյեան Երիտասարդութեան Տարուան ծօնուած տունակատարութեամբ մը, գործնապէս մարմնաւորեցին Մեծի Տան Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Կաթողիկոսին այն պատգամը, որ 2009 տարին կը հօչակէր Երիտասարդութեան Տարի: Արդարեւ, եթէ Վեհափառ Հայրապետը իր պատգամին մէջ մատնացոյց կ'ընէր Երկու գլխաւոր գիծ՝ Երիտասարդները Ներգրաւել մեր ազգային կեանքի աշխատանքի դաշտերուն մէջ ու ականչալուր ըլլալ անոնց հարցերուն, ընդառաջել տագնապներուն եւ զանոնք ուղղել Եկեղեցանուեր ու ազգանուեր աշխատանքի դաշտեր, Երեքշաբթի Երեկոյեան հանդիսութիւնը պերճախօս վկայութիւն մըն էր, թէ այդ պատգամը գործնական արտայայտութիւն կը գտնէ նաեւ մեր Թեմին մէջ:

Արդարեւ, Կիւնտեյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ յարկին տակ տեղի ունեցած «Երիտասարդութեան Տարուան Տօնակատարութիւն»ը, իր ամբողջութեանը մէջ, մէկ հայելին էր Երիտասարդութեան ու անոր կորովին, աշխատունակութեան: Ազգ. Առաջնորդարանի Առաքելութեան Տարածման յանձնախումբին կողմէ կազմակերպուած ու Թեմին բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Սուշեղ Արք. Մարտիրոսեանի հովանաւորութիւնը վայելող ձեռնարկին յայտագիրի իրագործումը ամբողջութեամբ վստահուած էր Երիտասարդներու: Երիտասարդներ էին օրուան բանախօսը, հանդիսավարը, հայկական Երիտասարդական միաւորներու ներկայացուցիչները եւ գեղարուեստական բաժինը Ներկայացնողները: Ամբողջ յայտագիրը խօսուն պատգամ մըն էր մեր հանրութեան, որ մեր Երիտասարդութիւնը մասնակից է հայկական կեանքին ու պատրաստ յանձն առնելու պատասխանատուութիւններ:

### ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ԽՕՍՔԸ

Յանդիսութիւնը սկսաւ Երեկոյեան ժամը 7:40ին, Առաջնորդ Սրբազան Յօր ու հոգեւորականաց դասու անդամներուն Եկեղեցի մուտքով ու Տերունական աղօթքին միացեալ կատարումով: Յանդիսավարը՝ Տիկին

Սօնա Մատարեան, Ներկաները ողջունելի ետք, Նկատել տուաւ, որ 2003Էն ասդին, մեր իրականութեան մեջ Վեհափառ Հայրապետին կողմէ ստեղծուած է գեղեցիկ աւանդութիւն մը՝ իւրաքանչիւր տարի կը նուիրուի յատուկ նպատակի մը, ու այս ծիրին մեջ, 2009 տարին նուիրուած է Երիտասարդութեան, որպեսզի վեր առնուին անոր արժանիքները, երեց սերունդին պատասխանատուութիւնը՝ անոր կազմաւրման մեջ ու նորահաս սերունդներուն ներգրաւումը մեր կեանքի տարբեր ասպարեզներուն մեջ:

Յայտագիրին առաջին բաժինը յատկացուած էր Երիտասարդական միաւրներու Ներկայացուցիչներու խօսքերուն: Յաջորդաբար խօսք առին թալին Հինտոյեան (իբրեւ Հ.Ս.Ը.Ս.ի Ներկայացուցիչ), Արեգ Սանդիկեան (Շ.Շ.Դ. Ներկայացուցիչ), Մելանի Վարդապետեան («Շանթ» ուսանողական միութեան Ներկայացուցիչ) եւ Րաֆֆի Նալճեան (Արեւմտեան Թեմի Երիտասարդական Միութեան Ներկայացուցիչ): Անոնք հակիրճ կերպով անդրադարձան իրենց միութեանց տարած աշխատանքներու բնոյթին, որոնք կը տարածուին դաստիարակութեան, եկեղեցանուեր աշխատանքներու, հայրենիքին ծառայութեան եւ ազգային գիտակցութեան զարգացման ուղղութիւններուն վրայ: Անոնք գոհունակութիւն եւ Երախտագիտութիւն արտայայտեցին, որ Վեհափառ Հայրապետը 2009 տարին ծօնած է Երիտասարդութեան, հաստատեցին, որ այս միութիւնները իրենց կարողութեան սահմաններուն մեջ լաւագոյնս կը մասնակցին մեր հասարակական կեանքին, պատրաստ են յանձն առնելու յաւելեալ աշխատանք եւ պատասխանատուութիւն:

Ռ. Նալճեանի խօսքն ետք, ցուցադրուեցաւ կարճ ժապաւեն մը, որ լուսարձակի տակ կը բերէր Թեմիս Երիտասարդական Միութեան տարաբնոյթ աշխատանքներն ու ծառայական գործունեութիւնը:

## «ՆՊԱՏԵՆՔ ԵՐԻՏԱՍԱՐԴԻՆ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՆ ՈՒ ԱՉԳ. ԴԱՏԿԱՆԵԼԻՌԵՎԱՆ ԳՈՅԱՌՄԱՆ»

Հանդիսավարը այսուհետեւ Ներկայացուց գլխաւոր բանախօսը՝ Տոքթ. Վիգեն Եագուաթեան, կանգ առնելով անոր ազգային գործունեութեան ու դաստիարակի ասպարեզին վրայ: Բանախօսը լայն գործունեութիւն ունեցած է մեր ազգային կեանքին մեջ, նաեւ շուրջ Երկու տասնամեակ վարած է ուսուցիչ-դաստիարակի աշխատանք, գլխաւորաբար վարելով Ռ. Եւ Ա. Փիլիպոս վարժարանի տնօրենի պաշտօնը:

Տոքթ. Վիգեն Եագուաթեան յայտնեց, թե այս խորհրդածութիւններն ու մտածումները, գորս կ'ուզէ բաժնեկցիլ հանդիսականներուն հետ, Ներշնչում կ'առնեն 2009 տարին Երիտասարդութեան Տարի հռչակող Վեհափառ Հայրապետի պատգամեն: Ան նշեց, որ Վեհափառ Հայրապետը Երբ թելադրանք կ'ընէ հաղորդակից ըլլալու Երիտասարդութեան հարցերուն, ան կ'անցնի լօգունքայինի սահմաններեն անդին ու հարցերը կը շօշափէ իրենց Եռլթեան մեջ. անոր պատգամին խորքը այն է, որ պետք է փնտռութի, որոնումի ծեռնարկել, մինչեւ իսկ Եթէ կը կարծենք, որ որոշ հարցերու պատասխանները ունինք կամ մեր դաստիարակութիւնը նման մտածում կը թելադրէ:

Բանախօսը հանգամանօրեն ու վերլուծական մօտեցումով անդրադարձաւ Երիտասարդութեան ուղղուած մարտահրաւերներուն, որոնք կը կայանան ինքնութեան փնտռութիւն, հաւատքի ու բարոյական հարցերու վրայ: Մարդ արարածին ի ծնւ ուղղուած հարցումներուն ու հարցականներուն անդրադառնալէ Ետք, ան կեդրոնացաւ հայրենիքն հեռու, մեր գաղութիւն նման կացութիւններու մէջ աչք բացող ու հասակ առնող Երիտասարդներու դիմագրաւած բարդ հարցերուն վրայ. ան նկատեց, որ բազմապիսի մշակոյթներու եւ ազդեցութիւններու ներքեւ հասակ առնող հայ պատասին ու Երիտասարդը, իր իմացական կեանքի առաջին օրեն իսկ, ինքզինք կը գտնէ բազմաթիւ ինքնութիւններու միջեւ որոնում կատարելու, կողմնորոշուելու կամ մինչեւ իսկ ազգային պատկանելիութեան նկատմամբ անտարբեր ու անհաղորդ մնալու կացութիւններու դիմաց, մինչեւ որ փորձառութիւն մը կամ որոշ իրադարձութիւն մը զինք առաջնորդէ դեպի ինքնագիտակցութիւն ու սեփական ժողովուրդի հարցերու կալուած: Այս նշեց, որ Միացեալ Նահանգներու մէջ հասակ առնող Երիտասարդը ի սկզբանէ կը գտնուի Երկուութեան մը դիմաց, ամերիկեան միջավայրի ու հայկական պատկանելիութեան Երկընտրանքը, ու զանոնք իրարու հետ ներդաշնակելու մարտահրաւերը: Այս ծիրին մէջ, կայ հայերենով կամ անգլերենով արտայայտուելու հարցը, ինչպէս պատահեցաւ նոյնինքն սոյս յայտագիրին առաջին բաժինին մէջ, երբ կարգ մը միաւորներու ներկայացուցիչներ նախընտրեցին արտայայտուիլ անգլերենով: Բանախօսին համաձայն, այս մէկը բնական երեւոյթ է ու պէտք է զայս դիմագրաւել հասկացողութեամբ, զայս չնկատել խոչընդոտ, որովհետեւ արտայայտութեան ձեւը ցուցանիշ պէտք չէ նկատել ազգային պատկանելիութեան կամ գիտակցութեան պակասի, թերութեան: Այս մօտեցումով, ան կանգ առաւ հայ ընտանիքին, Եկեղեցւոյ, միութեանց ու կազմակերպութեանց դերակատարութեան վրայ, շեշտելով, որ ամենէն կարեւորը այս է, որ Երիտասարդութիւնը պատրաստ ըլլայ գործոն մասնակցութիւն բերելու մեր կեանքին, ինչ հովանիի տակ ալ որ ըլլայ ու գործէ ան, իսկ աշխատանքի դաշտերը ընդարձակ են, Երիտասարդութեան մասնակցութեան պահանջը՝ անյետաձգելի: Պէտք է ըլլալ հանդուրժող, առիթ տալ, որ Երիտասարդը յարափոփոխ աշխարհին մէջ պատասխաններ գտնէ իր փնտռութեաններուն ու դուրս գայ խարխափումէ, հետեւաբար, պէտք է կանգնիլ Երիտասարդութեան կողքին, ըլլալ անոր կեանքին մէջ, ինչպէս որ կը թելադրէ Արամ Ա. Կաթողիկոս իր յիշեալ պատգամին մէջ: Պէտք է առիթ տալ Երիտասարդութեան, որ իր պատկանելիութիւններուն՝ հայկական եւ ոչ-հայկական պատկանելիութիւններուն, փորձառութիւններուն միջեւ համադրում ստեղծէ ու այդ բոլորը դնէ ի սպաս մեր հասարակական կեանքի զարգացման: Իբրեւ շօշափելի օրինակ, ան խօսեցաւ իր անձնական փորձառութիւններուն մասին, նշելով, որ ինք պատասխանական օրերուն հարկադրաբար հեռացած էր Պէյրութեն ու հայկական դպրոցի միջավայրէն, սակայն շնորհիւ հայկական միութեանց, կազմակերպութեանց ու ընտանեկան գուրգուրանքին, հանդուրժողութեան, կառչած է հայ կեանքին, լաւ սորված է հայերենը ու կազմաւորուած՝ ազգային դաստիարակութեամբ: Այս մօտեցումով ալ, ան իր խօսքը եզրափակեց այս մտածումով, որ մեր

Նորահաս Երիտասարդութեան պէտք է տայ ինքնագիտակցութեան ու ինքնակերտումի առիթ, գուրգուրանք տածել ու հանդուրժութիւն ցուցաբերլ անոր նկատմամբ:

## ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆԸ

Գեղարուեստական բաժինը ունէր Երկու գլխաւոր բաժին. Տիկին Սոսի Աւագեան-Մարտիրոսեան մեներգեց «Լեռներ Հայրենի»ն եւ «Կարօտ»ը, իսկ Ազգ. Առաջնորդարանի «Լուսաւորիչ» Երիտասարդական Երգչախումբը ներկայացուց Երեք խմբերգ՝ «Ով Հայոց Աշխարհ», «Առաւոտ Լուսաբեր» եւ «Բամ, Փորոտան»։ Խմբավարն էր Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան։ Երգեհոնի վրայ ընկերացաւ Տիկին Արմենուիի Տերտերեան։ Ինչպէս բանախօսն ու միութեանց ներկայացուցիչ Երիտասարդները, այնպէս ալ մենակատարը, Երգչախումբն ու խմբավարը արժանացան շերմ ծափողջոյններու։

## «ՅԱՄԱՐՈՒՄԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ»

Յանդիսութեան եզրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազնը։ Ան գոհութիւն յայտնեց Աստուծոյ, որ առիթը ընծայած է այս Եկեղեցւոյ յարկին տակ ու մեծաթիւ ներկաներու մասնակցութեամբ կատարելու Երիտասարդութեան Տարուան նուիրուած գլխաւոր ձեռնարկը, որուն համար ան գնահատանքի խօսք ուղղեց կազմակերպիչ յանձնախումբին, յայտագիրին մասնակիցներուն ու Երգչախումբին, ընդգծելով, որ Երիտասարդներու նուիրուած հանդիսութիւնը մարմսաւորուած է Երիտասարդներու կողմէ։ Ան յատուկ գնահատանք արտայայտեց Տօքթ. Վիզեն Եագուակեանի, ո՛չ միայն անոր ներկայացուցած թելադրական մտածումներուն, այլ նաեւ անթերի հայերենին համար, իբրեւ արդիւնք՝ անխոնչ աշխատանքի ու նախանձախնդրութեան։

Առաջնորդ Սրբազնը յիշեցուց, որ տարուան ընթացքին, մեր թեմին մէջ, Եկեղեցիներու յարկին տակ տեղի ունեցան շարք մը հանդիսութիւններ ու ձեռնարկներ, որոնք միում առած էին Վեհափառ Հայրապետի պատգամին թելադրանքներեն, իսկ այսօրուան յայտագիրը առիթ էր, որ Երիտասարդները իրենք խօսէին մեզի։ Ան մեկ առ մեկ անդրադարձաւ յիշեալ միաւորներու ներկայացուցիչներուն խօսքերուն, գնահատեց անոնց գործունեութիւնն ու պատրաստակամութիւնը, եւ կոչ ուղղեց, որ մեր Երիտասարդութիւնը ներգրաւուի Եկեղեցւոյ, ուսուցչական եւ ազգային տարբեր աշխատանքներու անդաստաններուն մէց։

Մեր բոլոր Եկեղեցիներն ու միութիւնները կը կատարեն Երախտաշատ աշխատանք, սակայն կ'ուզեմ վեր առնել կարեւոր կետ մը՝ տարբեր յարկերու տակ կատարուող աշխատանքներուն միջեւ համակարգումի ու համադրումի անհրաժեշտութիւնը, ընդգծեց Առաջնորդ Սրբազնը, նկատել տալով որ այլապէս, տարբեր գիծերու վրայ տարուող գործը այդքան արդիւնաւոր չ'ըլլար, որքան համակարգուած ու Ներդաշնակուած գործը։ Մեր մտածումներն ու ձեռքերը պէտք է քով քովի բերենք, լայնախոհութեամբ գտնենք միջին ճամբայ, շարունակեց ան, յատկապէս վեր առնելով հայ

ընտանիքին վերապահուած բանալի դերը, ինչպէս նաեւ Եկեղեցւոյ, կազմակերպութեանց ու միութեանց միջեւ գործակցութեան կարեւորութիւնը։ Ան դիտել տուաւ, որ մեր ազգային կեանքի տարբեր կալուածներուն մէջ պէտք ուսինք Երիտասարդներու, որոնք ծառայեն իբրեւ հոգեւորական, դաստիարակ, հոգաբարձու, ազգային Երեսփոխան, եւ այլ մարզերու մէջ։ Ան շեշտը դրաւ նաեւ ազգային դաստիարակութեան կարեւորութեան վրայ, իբրեւ բանալի՝ մեր ազգային կեանքի բարելաւման, իբրեւ գրաւական՝ ճիգերու արդիւնաւորման։ Առաջնորդ Սրբազնը յորդորեց, որ երեց սերունդը պէտք է լաւապէս կատարէ ուղղութիւն ցոյց տուողի իր դերը, Երիտասարդները ըլլան յառաջապահներ, կասն մեր Եկեղեցւոյ ու ազգի պայծառութեան։ Ան իր խօսքը Եզրափակեց ողջունելով Երիտասարդներուն ու նախկին Երիտասարդներուն նուիրումն ու նախանձախնդիր մօտեցումը։

Առաջնորդ Սրբազնին խօսքն ետք, Երգչախումբը երգեց «Կիլիկիա»ն եւ Յայրապետական Մաղթանքը։ Յանդիսութիւնը Վերջ գտաւ Առաջնորդ Սրբազնին Պահպանիչով։

Յանդիսութենեն ետք, Ներկաները Եկեղեցւոյ սրահին մէջ Վայելեցին հոգաբարձութեան ու տիկնանց միութեան կողմէ պատրաստուած կոկիկ հիւրասիրութիւնը։

## WESTERN PRELACY “YEAR OF THE YOUTH” CELEBRATION HELD AT ST. MARY’S CHURCH

In response to the proclamation of H.H. Catholicos Aram I of 2009 as the “Year of the Youth”, on the evening of Tuesday, November 3<sup>rd</sup>, 2009, a celebration was held at St. Mary’s Church in Glendale under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate. The event was organized by the Prelacy Outreach Committee.

The event began with the collective recitation of the Lord’s Prayer by the Prelate, clergy members, and guests, after which Master of Ceremonies Mrs. Sona Madarian delivered the welcoming remarks. The first part of the program consisted of youth remarks by representatives of community organizations; they were Talin Hindoyan (Homenetmen), Arek Santikian (AYF), Melanie Vartabedian (Shant Student Association), and Raffi Naljian (ACYA). The representatives briefly presented the general endeavors of their respective organizations and spoke of their participation in our community life. At the end of the remarks, a video on the activities of the ACYA was shown.

Keynote speaker Dr. Viken Yacoubian was then invited up for his speech on “The Role of Youth in our Church and National Life”. Dr. Yacoubian went over the challenges facing youth today, from finding their self-identities, to faith and ethics issues. He focused specifically on the situation of Armenian youth living in the Diaspora and the special challenges they face living in a multi-cultural environment with a number of outside influences that can alter their sense of belonging to their nationality. Dr. Yacoubian noted that kids growing up in America struggle between their Armenian and American identities and

face the challenge of finding a balance between the two. He stressed the role of Armenian families, our church, and community organizations in this regards, making sure that our youth are ready to actively participate in our national life in any and every capacity. He noted that adults must stand by our youth, welcoming their participation and giving them opportunities; and they must allow our youth the chance to reconcile their two identities all the while contributing to the advancement of our nation. Taking an example from his own childhood, he noted that he too grew up outside of Armenian school and received education and instruction on our national values from family and community organizations. He concluded by reiterating that we must stand by our youth and allow them the chance to build their self-identities and self-awareness.

The artistic program consisted of two songs presented by Sossy Avakian-Mardirossian, and a performance by the "Lousavorich" Youth Choir led by Very Rev. Fr. Barthev Gulumian.

Following the choir's performance, the MC invited the Prelate to deliver his message. The Prelate first and foremost thanked God for the successful event, and commended the organizing committee and participants for their efforts and contributions, specifically Dr. Viken Yacoubian for his thoughtful presentation. The Prelate noted that events dedicated to the "Year of the Youth" have taken place throughout the year in various parishes; however, this evening was difference in that we were able to hear the perspective of our youth. He commended them once again for their remarks and urged them to become further involved in our church and community. The Prelate continued, stating that although our churches and various organizations individually carry out great work, he stressed the need to combine efforts for a more productive outcome, and called for further collaboration and the uniting of minds and efforts. The Prelate concluded by underscoring the need for youth involvement in all aspects of community life, whether as clergy members, educators, Board of Trustees members, delegates, and so on, and the responsibility of the older generation to give the right guidance and instruction to our youth.

The singing of the Cilician and Pontifical anthems followed the Prelate's message, and the evening concluded with the Prelate's benediction.

Guest were then hosted to a reception in the church hall organized by the parish Ladies Auxiliary.